ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 21

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Գոռ Գևորգյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ. ԱԲԴԵԼ ՖԱԹԱՀ ԱԼ-ՍԻՍԻԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ (2013-2019) 7-17

Արամ Գասպարյան
ԱԼԺԻՐԻ ԲԵՐԲԵՐՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՇԱՐԺՈՒՄԸ (1962-1999 թթ.) 18-30

Տաթևիկ Մկրտչյան, Միքայել Հովհաննիսյան
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐԱԲԱԼԵՁՈՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ (2016, 2020 ԹԹ.). ԴԻՄԿՈՒՐՄՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ 31-49

Արմինե Հակոբյան
ԱԲՈՒ ԲԱԿՐ ԱՍ-ՍՈՒԼԻԻ «ԱԽԲԱՐ ԱԼ-ՇՈՒԱՐԱ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՄՊՈԶԻՑԻԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՑԵՊՏԸ 50-65

Մոհամմեդ Հաջ Իբրահիմ
ԱԾԽԱԶՐԱԾՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 66-78

Խադիջե Ահմադ Մեհրաբի
ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՂՈՒՐԱՆԻ ՏԵՔՍՏՈՒՄ 79-86

Իրանագիտություն

Անուշ Ստամբոլցյան
ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆՈՒ «ՎԵԼԱՅԱԹ-Ե ՖԱՂԻՀ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 87-97

Ալեն Հայրապետյանց
ՆՈՐԱԳՅՈՒՏ DNF ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԲԱՅԱՁԵՎԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԽՈՐՀՈՒՐԴ» 98-110

Նունիկ Դարբինյան
ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ՇՈՒՐՋ 111-133

Տիգրան Չանդոյան
ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 134-144

Թյուրքագիտություն

Կուրապյ Ուրազաևա, Վերոնիկա Ռազումովսկայա, Ալեքսանդր Սաֆարյան
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏՐԱՆՍՄԻՍԻԱՅԻ ՁԵՎ: ՂԱԶԱԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 145-166

Արշակ Գևորգյան
ՍՏՎԵՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ 167-186

Մարգարիտա Կրտիկաշյան
ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՋՅԱՆԻ ԴԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ 187-200

Սամվել Ռամազյան *
ԵՎՐՈՊԱՅՈՒ (ՖՐԱՆԿԻ) ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐՈՒՄ 201-223

Անի Ոսկանյան
ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ ԳԱՎԱՌԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ 224-238

***

Ռուսլան Ցականյան
ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (ԳԵՐԵՐԿԱՐ, ԵՐԿԱՐ, ՄԻՋԻՆ, ԿԱՐՃ ԵՎ ԳԵՐԿԱՐՃ ԹՎԱԳՐՈՒՄՆԵՐ) 239-247

Հովհաննես Խորիկյան
ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ 248-261

CONTENT

Arabic Studies

Gor Gevorgyan
EGYPT`S POSITION ON THE SYRIAN CRISIS: DURING THE PRESIDENCY OF ABDEL FATTAH AL-SISI 7-17

Aram Gasparyan
ALGERIAN BERBERS MOVEMENT FOR THE PRESERVATION OF NATIONAL IDENTITY (1962-1999) 18-30

Tatevik Mkrtchyan, Mikayel Hovhannisyan
COVERAGE OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT IN ARABIC-LANGUAGE MEDIA DURING BOTH WAR PERIODS (2016, 2020): DISCOURSE ANALYSIS 31-49

Armine Hakobyan
COMPOSITION AND AUTHOR FUNCTION OF ABU BAKR AS-SULI'S "AKHBAR AL-SHU'ARA" 50-65

Mohammed Haj Ibrahim
THE ROLE OF HYDROCARBON RESOURCES IN THE CONTEXT OF THE SYRIAN CONFLICT 66-78

Khadije Ahmad Mehrabi
THE PROBLEM OF ALTERNATION OF PARTICLES IN THE TEXT OF THE QUR'AN 79-86

Iranian Studies

Anush Stamboltsyan
THE RELIGIOUS, HISTORICAL AND POLITICAL PRINCIPLES OF IMAM KHOMEINI'S "VELAYAT-E FAQIH" DOCTRINE 87-97

Alen Hayrapetyanc
THE INTERPRETATION OF THE "MYSTERIOUS" VERB FORM OF THE RECENTLY DISCOVERED DNF INSCRIPTION: "BLESSING OR ADVICE?" 98-110

Noonik Darbinian
SOME CREATURES FOUND IN IRANIAN FAIRY TALES AND FOLKLORE 111-133

Tigran Candoyan
ETHNO-GEOGRAPHIC BOUNDARIES OF KURDISH NATIONALISM IN THE TERRITORY OF THE REPUBLIC OF TURKEY 134-144

TurkicStudies

Urazaeva K.B., Razumovskaya V.A., Safaryan A.V
LITERARY TRANSLATION AS A TYPE OF CULTURAL TRANSMISSION IN SOCIAL TRANSFORMATIONS CONTEXT. ABOUT KAZAKH LITERATURE TRANSLATIONS INTO ARMENIAN 145-166

Arshak Gevorgyan
THE PARAPOLITICAL PERCEPTION OF THE HYBRID NETWORK STRUCTURES OF SHADOW GOVERNANCE: THE TURKISH DEEP STATE 167-186

Margarita Krtikashyan
THE ROLE OF TIGRAN CHUKHAJIAN IN THE TURKISH MUSIC SCENE 187-200

Samvel Ramazyan
THE PERSONAGE OF EUROPEAN (FRANK) IN ARMENIAN AND TURKIC EPICS 201-223

Ani Voskanyan
ABOUT THE PECULIARITIES OF ECONOMIC LIFE IN THE CHORK-MARZPAN SUB-DISTRICT, ADANA PROVINCE 224-238

***

Ruslan Tsakanyan
CHRONOLOGICAL PROBLEMS OF ASSYRIAN HISTORY (EXTRA-LONG, LONG, MIDDLE, LOW, ULTRA-LOW DATES) 239-247

Hovhannes Khorikyan
THE TERRITORY AND BOUNDARIES OF CAPPADOCIA IN ACHAEMENID PERSIA 248-261

Անուշ Ստամբոլցյան[1]

ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆՈՒ «ՎԵԼԱՅԱԹ-Ե ՖԱՂԻՀ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Բանալի բառեր. *Իրան, Իմամ Խոմեյնի, իսլամ, շիիզմ, իմամաթ, վելայաթ-ե ֆաղիհի, իսլամական պետություն, հայեցակարգ, իսլամական իրավագիտություն*

Իմամ Խոմեյնու «վելայաթ-ե ֆաղիհի» հայեցակարգն իսլամի և, մասնավորաբար, նրա շիական ուղղության դավանաբանական սկզբունքների վրա հիմնված կուռ և համապարփակ ուսմունք է, որի փիլիսոփայությունն անմիջապես թելադրված է Մոհամմեդ Ռեզա Փեհլևի շահի օրոք Իրանում ծավալվող զարգացումների բնույթով ու առանձնահատկություններով:

Այս հայեցակարգը, փաստորեն, իմամ Խոմեյնու կողմից աշխարհաքաղաքական նոր իրողության պայմաններում շիական դավանաբանության հիմնական դրույթի՝ իմամաթի ժառանգականության նորացված մեկնաբանությունն է, որով հիմնավորվում է իմամի թաքուցման շրջանում բոլոր՝ սոցիալական, հասարակական, քաղաքական, մշակութային և այլ բնագավառներում արդարամիտ, բանիմաց ֆաղիհի անսահմանափակ կառավարման իրավունքը: Այդ նույն նպատակին է ուղղված նաև ավանդականի և ժամանակակիցի համադրումը, կրոնականի և աշխարհիկի, կրոնի և քաղաքականության միասնականության և անբաժանելիության հիմնադրույթի վերածնումը:

[1] պ.գ.թ., դոցենտ ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոն

Իրանում «վելայաթ-ե ֆաղիհի» հայեցակարգի գործնական իրականացումն իմամ Խոմեյնին, իրավամբ, դիտում էր որպես Մոհամմեդ Ռեզա Փեհլևի շահի վարչակարգից ձերբազատվելու և իսլամական ճշմարիտ արժեքների գերակայությամբ օրինական կառավարման համակարգի ստեղծման միակ վստահելի միջոց, ինչը հատկապես հրատապ ու անհետաձգելի էր դառնում շահի, ինչպես նաև նրա թողտվությամբ Իրանի նկատմամբ Ամերիկայի Միացյալ Նահանգների՝ Իրանի անկախությունը վտանգող և իրանցիների ինքնությանը սպառնացող որոշակի քաղաքականությամբ:

Իմամ Խոմեյնու «վելայաթ-ե ֆաղիհի» հայեցակարգի մշակման և ձևավորման գաղափարը, նրա հիմնական դրույթներն ու նպատակները, ինչպես նաև վստահությունը իսլամական կառավարման այդ ձևի նկատմամբ մեծապես պայմանավորված են կրոնական, պատմական և քաղաքական հիմքերով, որոնց ուսումնասիրությունն ու վերլուծությունը լայն հնրավորություն է տալիս ճշգրտել այդ հայեցակարգի և նրա հետ առնչվող տարաբնույթ հարցերի ընկալումն ու գնահատականը:

Շիիզմի դավանաբանության կարևոր հիմքերից մեկի՝ իմամաթի և նրա ժառանգականության դրույթն ինքնին այն իրողության արտահայտությունն է, որ իսլամական համայնքը բոլոր ժամանակներում կարիք ունի Աստծու կամքին ու ժողովրդի կարիքներին լավատեղյակ, անսխալական, արդարամիտ առաջնորդի, որը կստանձնի շիական համայնքը ղեկավարելու և նրան ճիշտ ճանապարհով ուղղորդելու պատասխանատվությունը, ձեռք կբերի համայնքի կատարյալ վստահությունը և կպահպանի նրա վրա իր ազդեցությունը: Այսինքն, իմամաթը Աստծու կողմից ընտրված աստվածային բնույթի և աստվածային օրենքների վրա հիմնված կառավարման ձև էր, իսկ իմամը՝ իշխանության կրող: Եվ

ամենևին էլ պատահական չէ, որ «վելայաթ-ե ֆաղիհի» հիմքում դրված են կառավարման հենց այդ բանաձևը և շիական դավանաբանության մեջ գերագույն իշխանության պատկերացումները:

Իսլամական պետությունն, այսպիսով, աստվածային օրենքների պետություն է[2], հետևաբար, իմամի թաքուցման ժամանակ ևս այն պետք է կառավարվի աստվածային օրենքներով[3]: Եվ քանի որ մարգարեի ամենահիմնական պարտականությունն աստվածային օրենքների և հրահանգների միջոցով հասարակության մեջ արդար համակարգի հաստատումն է, ապա իմամ Խոմեյնու համոզմամբ, բնականաբար, իմամի բացակայության ժամանակ այն կարող է ստանձնել միայն մարգարեի կողմից հովանավորվող լավագույն օրենսգետ-աստվածաբանը՝ ֆաղիհը[4]:

Ակնհայտ է, որ իմամ Խոմեյնին, անվերապահորեն պահպանելով իմամաթի համակարգում համայնքի առաջնորդի անհարժեշտության դրույթը, փաստորեն, արմատապես վերանայում է նրա մյուս բաղադրիչը՝ իմամության ժառանգական փոխանցման սկզբունքը, և նրան տալիս միանգամայն նոր մեկնաբանություն, ինչն իսլամի էվոլյուցիայի տարբեր փուլերում տեղի ունեցած փոփոխությունների համատեքստում որոշակիորեն հասկանալի և ընդունելի է դառնում: Փոխարենը՝ «վելայաթ-ե ֆաղիհ» հայեցակարգում նույն՝ կրոնական հիմքի վրա նրա կողմից ճշգրտվում և հիմնավորվում է այս անգամ արդեն մարգարեի, իմամի, ֆաղիհի կառավարման փոխկապակցությունն ու ժառանգականությունը՝ հաստատելու համար իսլամական

[2] Emam Khomeyni. 1373: 44.
[3] Նույն տեղում, էջ 50:
[4] Imam Khomeini. 2002: 62.

կառավարման համակարգում վերջինիս կառավարման օրինականությունը:

Այսպիսի ընտրությունը, որը թելադրված էր ստեղծված իրադրության պայմաններում իսլամի պահպանման անհրաժեշտությամբ[5] (ինչն իմամ Խոմեյնին համարում էր հավատացյալների պարտականություններից ամենակարևորը)[6], հիմնավորվում էր Ղուրանի առանձին սուրահների մեկնաբանություններով, ֆաղիհի և նրա իրավասությունների մասին կրոնական ավանդություններում ներկայացված բազմաթիվ տեղեկություններով, ինչպես նաև «իմամ» հասկացության ամենատարբեր ընկալումների ու բացատրությունների առկայությամբ:

Ֆաղիհի կառավարման իրավունքը հիմնավորվում էր նաև նրանով, որ իսլամական աստվածաբանության կարևոր մասը կազմող իսլամական իրավագիտության մեջ և իսլամական իրավունքում արդեն իսկ ֆաղիհին վերապահվում էր կրոնական և հասարակական հարաբերությունների հետ կապված մի շարք հարցերի կառավարումը, այսինքն՝ սահմանափակ վելայաթի իրականացումը:

Եվ, իհարկե, այն կարևոր իրողությամբ, որ իսլամի պատմական էվոլյուցիայի ընթացքում արդեն իսկ առկա էր իմամի թաքուցման շրջանում ուլեմների և ֆաղիհների՝ որպես վերջինիս ներկայացուցիչներ և տեղապահներ նրան փոխարինելու նախադեպը[7]:

Ամեն կերպ հաստատելով ֆաղիհի անսահմանափակ կառավարման իրավունքի օրինականությունը և դրանով իսկ նրա

[5] Emam Khomeyni. 1373: 69.
[6] Նույն տեղում:
[7] M. Qadiwar. 1376: 16-18.

համար ապահովելով այն հեղինակությունը, որ ունեին մարգարեն և իմամները, իմամ Խոմեյնին, միաժամանակ, անհրաժեշտ է համարում ճշգրտել, որ դա որևէ չափով չի նույնացնում նրանց աստիճանակարգը: «Վելայաթ-ե ֆաղիհ» աշխատության մեջ նա հատկապես ընդգծում է, որ խոսքն այս դեպքում ոչ թե վերաբերում է ֆաղիհի դիրքին, այլ պարտականությանը, և որ այդ ծանր պարտականությունը կարող է իրականացնել միմիայն «իսկական» ֆաղիհը, որն օժտված է իմամին բնորոշ հատկանիշներով: Այսինքն, նա ոչ միայն պետք է լինի իսլամական օրենքների լավագույն գիտակ և ունենա դրանք կիրառելու փորձառություն, այլև հասարակական բոլոր բնագավառները կառավարելու ունակություն և արդարամտություն[8]:

Իմամ Խոմեյնին խստագույնս զգուշացնում էր նաև, որ եթե ֆաղիհը իսլամում սահմանված կանոններին հակառակ որևէ քայլ կատարի, կրոնական օրենքը խախտի կամ համայնքի անդամների նկատմամբ բռնություն գործադրի, ինքնըստինքյան կառավարումից կհեռացվի, քանի որ կկորցնի ժողովրդական զանգվածների վստահությունը[9]:

Այսինքն, «վելայաթ-ե ֆաղիհի» հայեցակարգում հավասարապես պահպանվում էր նաև իմամաթի համակարգի ղեկավարի համար ավանդաբար ձևավորված որակների, արժանիքների և ունակությունների անհրաժեշտությունը, ինչը նրան դարձնում էր իսկական խարիզմատիկ առաջնորդ՝ «իմամ»:

Իսլամին վերապահելով ամենալայն ընդգրկում՝ իմամ Խոմեյնին այն, իրավամբ, դիտում էր որպես օրենքների համապարփակ ամբողջություն, որպես վարքականոն, որն ընդունելի է ողջ ժողովրդի կողմից բոլոր ժամանակներում, բոլոր

[8] Emam Khomeyni. 1373: 51.

[9] Նույն տեղում, էջ 72-73:

հանգամանքներում և բոլոր առումներով:[10] Մանրամասնելով վերը ասվածը՝ նա ավելացնում է, որ և՛ կրոնական պարտականությունների, և՛ սոցիալական ու պետական գործերի համար այն (իսլամը - Ա.Ս.) ունի օրենքներ և կանոններ. իսլամական օրենքն առաջադիմական է, դինամիկ և համապարփակ: Մզկիթները մշտապես հանդիսացել են ղեկավարման ու առաջնորդման, սոցիալական խնդիրների քննության և վերլուծության կենտրոններ[11]:

«Վելայաթ-ե ֆաղիհի» օրինականությունը հաստատող կարևոր հիմք էր նաև պատմականորեն պետական և հասարակական ամենատարբեր բնագավառներում հոգևորականների գործուն մասնակցության իրողությունը: Հայտնի է, որ ինքը՝ Մուհամմեդ մարգարեն, բացի կրոնի ստեղծող և քարոզիչ լինելուց, միաժամանակ պետական գործիչ էր և հաջողությամբ ամենալայն, տարաբնույթ գործունեություն էր ծավալում պետության ներքին և արտաքին քաղաքականության բնագավառներում: Բազմաթիվ տեղեկություններ կան նաև այն մասին, որ իմամները և ուլեմները նույնպես իրենց հիմնական՝ կրոնական և քարոզչական պարտականություններին զուգընթաց ակտիվորեն ներգրավված էին նաև աշխարհիկ գործերի մեջ:

Խորապես վստահելով իսլամական օրենքներին և արդի պայմաններում ևս նրանց կենսունակությանը՝ իմամ Խոմեյնին կարևորում էր այդ օրենքների վրա հիմնված պետության ստեղծման անհրաժեշտությունը: Նա, մասնավորաբար, գտնում էր, որ ֆաղիհը մյուս ֆաղիհների հետ համատեղ կամ անհատապես պետք է ձևավորի կառավարություն՝ որպեսզի իրագործվեն

[10] D. Norouzi, I. Itcherenska. 1982: 95.

[11] Նույն տեղում:

իսլամական օրենքներն ու պահպանվի նրանց գործունեության տարածքը:[12]

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հասարակական կյանքի առանց բացառության բոլոր բնագավառներում ֆաղիհի կառավարման իրավունքը նախ և առաջ ապահովվում էր դեռևս վաղ իսլամում աշխարհիկի և հոգևորի, ինչպես նաև կրոնի և քաղաքականության միասնականությամբ ու անբաժանելիությամբ՝ որպես միակ Աստծու իշխանության արտահայտություն: «Իսլամական կրոնը միայն պաշտամունքային կրոն չէ... և, միևնույն ժամանակ, միայն քաղաքական կրոն չէ. այն և՛ պաշտամունքային է, և՛ քաղաքական. քաղաքականությունը ներգրավված է նրա պաշտամունքային արարողությունների մեջ, և պաշտամունքային արարողությունները՝ քաղաքական հարցերի մեջ: Այսինքն՝ պաշտամունքային կողմն ունի նաև քաղաքական կողմ»,- ասում է իմամ Խոմեյնին[13]:

Հերթական անգամ անդրադառնալով այդ խնդրին, իմամ Խոմեյնին նշում է. «Իսլամը քաղաքական կրոն է: Դա մի կրոն է, որի դրույթներում քաղաքականությունը պարզորոշ կերպով տեսանելի է»[14]:

Իրանում շահական կառույցի տապալումը և «վելայաթ-ե ֆաղիհի» հաստատումն, անշուշտ, հնարավոր չէր իրականացնել առանց իշխանության դեմ համախմբված, միասնական պայքարի,

[12]Imam Khomeini. 2002: 47. Իմամ Խոմեյնին, մեկնաբանելով Ղուրանի «Էբրահիմ», «Յունուս», «Հաջ», «Էհզաբ» և այլ սուրահնների առանձին այեները հաստատում է, որ իսլամական պետության հիմնումն իր՝ մարգարեի կողմից է հրահանգվել, քանի որ ինքն էլ պետություն էր ստեղծել և լավ գիտեր դրա կարևորությունն աստվածային օրենքներն իրականացնելու համար: Emam Khomeyni. 1373: 26-27.

[13] Doctrine de la Révolution islamique. 2003: 170.

[14] Hoqumat-e eslami wa velayat-e faghih. 1372: 10.

ինչի համար ևս առկա էին թե՛ կրոնական, թե՛ քաղաքական և թե՛ պատմական լուրջ հիմքեր:

Այս կապակցությամբ իմամ Խոմեյնին հատկապես առանձնացնում է Ղուրանի այն պատվիրանները, որոնք վկայում են մուսուլմանների միասնականության մասին, ինչպես, օրինակ, այն, որ «հավատացյալները հավատարիմ եղբայրներ են»[15], ինչը նրա համոզմամբ և՛ բարոյական է, և՛ սոցիալական, և՛ քաղաքական[16]:

Ակնհայտ է, որ հիմնականում հենց այս վերջին իրողություն էր, որ միշտ և բոլոր ժամանակներում ապահովում էր ներքին և արտաքին ուժերի դեմ ժողովրդական զանգվածների համախմբումն ու համատեղ գործողությունները: Այս համատեքստում իմամ Խոմեյնու համար, հասկանալիորեն, առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում իսլամում ազատության, ժողովրդի անկախության պահպանման և դրա համար պայքարի գաղափարը: «Իսլամը մարտնչող անհատների կրոնն է, ովքեր հետամուտ են իրավունքին ու արդարությանը: Դա նրանց կրոնն է, ովքեր ձգտում են անկախության ու ազատության: Նրանց կրոնն է, ովքեր պայքարում են բռնատիրության դեմ»[17]:

«Իսլամական կրոնն իր ծագման պահից սկսած ընդդիմադիր է եղել տիրող հասարակարգերին, քանի որ կյանքի բոլոր՝ անձնական, հասարակական, տնտեսական, մշակութային և այլ կողմերի ու բնագավառների համար սահմանել է իր սեփական օրենքները»,- գրում է իմամ Խոմեյնին[18]:

Ինչ վերաբերում է շիիզմին, ապա վերջինս արդեն իսկ պատմականորեն ձևավորվել էր որպես ընդդիմադիր ուղղություն, այսինքն՝ նրա մեջ սկզբից եթե առկա էր ընդդիմադիր ոգին և

[15] Khuran, surah al-hijrat, ayat 10. 1977: 516.
[16] Doctrine de la Révolution islamique. 2003: 167:
[17] Emam Khomeyni. 1373: 10.
[18] Hoqumat-e eslami wa velayat-e faghih. 1372: 3.

ընդդիմադիր ներուժը: Շիիզմը նաև ժողովրդական զանգվածներին համախմբող ու անարդարության դեմ պայքարի հանող միջոց էր, ինչը մշտապես ունեցել է իր դրսևորումները և ինչի շնորհիվ պատմական զարգացման որոշակի փուլում՝ արդեն իսկ 16-րդ դարում Սեֆյան պետության հիմնադրմամբ իրանցիների համար ապահովեց իրենց հավատքի և ինքնության պահպանման հնարավորությունը:

Իմամ Խոմեյնին, իրավամբ, գտնում է, որ շիիզմի ամենահիմնական առանձնահատկությունը եղել և մնում է պայքարը բռնակալության ու անարդարության դեմ, ինչն իր արտահայտությունն է գտել շիիզմի ողջ պատմության ընթացքում[19]:

Արծարծվող այս խնդիրներն, այսպիսով, ժամանակակից իսլամի համար արդիական դարձան շնորհիվ այն բանի, որ դրանք մշտապես առկա էին մուսուլմանական աշխարհի հոգևոր և քաղաքական կյանքում:

Հոգևորի և աշխարհիկի, ինչպես նաև կրոնի և քաղաքականության տարանջատումը տեղի է ունեցել ավելի ուշ՝ իսլամի էվոլյուցիայի որոշակի փուլում՝ որպես անխուսափելի հետևանք իսլամի դավանաբանական պատկերացումների և պետական համակարգի ավանդական ձևի աստիճանական փոփոխությունների բնականոն, պատճառաբանված, նաև անխուսափելի հետևանք:

Այսինքն, «վելայաթ-ե ֆաղիհն» ուներ այն բոլոր հիմքերը, որոնք նրան դարձնում էին ոչ միայն աստվածաշնորհ և օրինական, այլև անհրաժեշտ: Այդ հիմքերն, ինչպես արդեն ասվեց, վաղ իսլամի մեջ էին, նրա էվոլյուցիայի, Իրանի պատմական զարգացման ողջ ընթացքի, ինչպես նաև Իրանի պետական համակարգի և նրա

[19] Doctrine de la Révolution islamique. 2003: 156.

նկատմամբ Արևմուտքի, մասնավորապես, ԱՄՆ-ի քաղաքականության մեջ:

Լայնորեն քննարկելով և վերլուծելով Ղուրանում, հադիսներում և, ընդհանրապես, կրոնական ավանդություններում առկա տեղեկություններն ու տվյալները, և հաշվի առնելով էվոլյուցիայի ընթացքում կրոնի մեջ կատարված փոփոխությունները, իմամ Խոմեյնուն հաջողվեց վերականգնել իսլամի դավանաբանության մեջ առանձին, ժամանակի ընթացքում մոռացության մատնված դրութներ, համադրել իսլամի մեջ ավանդականն ու արդիականը և, միշտ հավատարիմ մնալով իսլամի դավանաբանական սկզբունքներին ու փիլիսոփայությանը՝ նրա մեջ ներմուծել նոր դրույթներ, որոնք այն դարձրին ժամանակակից իրադրությանը համահունչ և կիրառելի:

«Վելայաթ-ե ֆաղիհ» հայեցակարգը հստակեցրեց ստեղծված աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում Իրանի ներքին և արտաքին քաղաքականության սկզբունքներն ու կողմնորոշումները և ճշգրտեց նրա զարգացման ուղղվածությունն ու հետագա ընթացքը: Իրանի նորաստեղծ պետական կառուցվածքը, որի հիմքում դրված էր «վելայաթ-ե ֆաղիհի» գաղափարախոսությունը, ոչ միայն հնարավոր դարձրեց Իրանի ձերբազատումը օտար տևական գերակայությունից ու ազդեցությունից, այլև թույլ տվեց հաջողությամբ դիմակայելով իր նկատմամբ տարատեսակ ճնշումներին, դժվարություններին ու մարտահրավերներին՝ միջազգային հարաբերություններում պահպանել իր հեղինակությանն ու պայմաններ ապահովել երկրի տնտեսական և քաղաքական կայուն զարգացման համար:

THE RELIGIOUS, HISTORICAL AND POLITICAL PRINCIPLES OF IMAM KHOMEINI'S "VELAYAT-E FAQIH" DOCTRINE

Anush Stamboltsyan

(Summary)

The article examines the religious, historical and political principles of the concept, character and essential aspects of Imam Khomeini's "Velayat-e Faqih" doctrine. Simultaneously, the very important circumstance is confirmed that the principles of this doctrine provided the opportunity for the establishment of the Islamic Republic in Iran and set aside for the purposes and direction of its domestic and foreign policy.

РЕЛИГИОЗНЫЕ, ИСТОРИЧЕСКИЕ И ПОЛИТИЧЕСКИЕ ОСНОВЫ ДОКТРИНЫ ИМАМА ХОМЕЙНИ «ВЕЛАЯТ-Е ФАКИХ»

Ануш Стамболцян

(Резюме)

В статье рассматриваются религиозные, исторические и политические основы, определяющие концепцию, характер и важнейшие аспекты доктрины имама Хомейни «велаят-е факих».

Одновременно подтверждается то обстоятельство, что именно принципы этой доктрины обеспечили возможность установления в Иране Исламской Республики и предназначили цели и направленность ее внутренней и внешней политики.